ԲԱԺԻՆ 3. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 3: СРАВНИТЕЛЬНАЯ ПЕДАГОГИКА
SECTION 3: COMPARATIVE PEDAGOGY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հարությունյան Նազիկ
ԵՊՀ, Հայաստան

Համառոտ ներածական: Այսօր չափազանց կարևորվում են տարբեր երկրների կրթության համակարգերի ուսումնասիրությունը, նրանց կառավարման համեմատական վերլուծությունը՝ որպես առաջավոր փորձի ուսումնասիրության կարևոր ուղի: Սույն հոդվածում տրվում է ԵԱՏՄ անդամ երկու երկրի՝ Հայաստանի և Ղազախստանի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն բոլոնյան գործընթացի համատեքստում:

Հիմնախնդիրը: Համեմատական մանկավարժության զարգացմանը խորապես նպաստում են աշխարհի տարբեր երկրների կրթության համակարգերի համապարփակ ուսումնասիրությունները, քանի որ դրանք լայն հնարավորություններ են ստեղծում առաջավոր փորձի ճանաչմանը և փոխանակմանը:

Հետազոտության նպատակը: Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել և համեմատական վերլուծության ենթարկել ԵԱՏՄ անդամ երկու երկրի՝ Հայաստանի և Ղազախստանի բարձրագույն կրթության կառավարման համակարգերը՝ ներկայացնելով դրանց նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումներն ու խնդիրները:

Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն: Աշխարհի տարբեր երկրների բարձրագույն կրթության համակարգերի կառավարման վերաբերյալ կան եվրոպական, ռուս և հայ մանկավարժ-գիտնականների բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք անդրադարձել են ինչպես առանձին երկրի, այնպես էլ տարբեր երկրների բարձրագույն կրթության համակարգերիի կառավարմանը՝ տալով դրանց համեմատական վերլուծությունը: Նրանց թվում կնշեինք՝ С. Д. Резник, В. М. Филиппов, А. Багрыч, А. Г. Бермус, А. П. Нестеров, Е. Н. Трушина , Э. А., Сериков, Ю. Н. Пак, А. М. Газалиев, Л. И. Кашук, П. Скотт,

Ն. Հարությունյան, Ա. Գրիգորյան, Յու. Սարգսյան, Ա. Բուդաղյան, Մ. Ավետիսյան և այլք: Նրանցից յուրաքանչյուրի խոսքը նորովի մոտեցում է հիմնախնդրին:

Հետազոտության նորույթը: Առաջին անգամ Հայաստանում կատարվում է մեծ և համապարփակ ուսումնասիրություն՝ ԵԱՏՄ անդամ չորս երկրների՝ Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի և Ղազախստանի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն՝ վեր հանելով նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումներն ու խնդիրները: Սույն հոդվածում տրվում է միայն Հայաստանի և Ղազախստանի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծությունը՝ ներկայացնելով նրանց նմանություններն ու տարբերությունները բոլոնյան գործընթացի համատեքստում:

Բանալի բառեր: Բարձրագույն կրթություն, եռաստիճան համակարգ, կառավարման համակարգ, կրթական բարեփոխումներ, գնահատման համակարգ, բոլոնյան գործընթաց:

Ուսումնասիրվող երկու երկրներն էլ՝ Հայաստանն ու Ղազախստանը, նախկին Խորհրդային Միության հանրապետություններ էին, որոնք նույն սկզբունքներով ու պայմաններով ինտեգրված էին երկրի բոլոր ոլորտներում որպես մի ամբողջական համակարգ: Սա խոսում է այն մասին, որ անկախացումից հետո երկու երկրներն էլ դեռ որոշ ժամանակ շարունակում էին գործել Խորհրդային Միության թե՛ Սահմանադրության, թե՛ օրենքների շրջանակներում մինչև նորերի ընդունումը: Սակայն 90-ական թվականների վերջերին և 2000-ականի սկզբներին և՛ Հայաստանը, և՛ Ղազախստանը սկսեցին համակարգված մոտեցումներ դրսևորել իրենց երկրների կրթության համակարգերի բարեփոխումների նպատակով:

Սույն հոդվածում շեշտը դրվում է երկու երկրների բարձրագույն կրթության համակարգերի վրա՝ դրանց զարգացման ընթացքը ներկայացնելու և վերլուծելու նպատակով:

Համալսարանների զարգացումը պայմանավորված է միջազգային, ազգային և տարածաշրջանային մշակույթներով՝ ներառելով արժանի և գնահատող վերաբերմունքը կրթության և գիտության նկատմամբ:

Թե՛ Հայաստանի և թե՛ Ղազախստանի համար երկրի կարևորագույն խնդիրներից են կրթության համակարգի պահպանումն ու զարգացումը, նրա գիտական կառավարումը, համապատասխանեցումը միջազգային չափանիշ-

ներին և նրա մրցունակության ապահովումը միջազգային ասպարեզում: Այս ամենի իրականացումը, իհարկե, պահանջում է կրթության համակարգի լուրջ բարեփոխումներ, որին գնացել են և՛ Հայաստանը, և՛ Ղազախստանը:

«Հասարակության կրթվածության հիմնախնդիրը որոշիչ դեր ունի ազգերի ժամանակակից և սոցիալական նշանակություն ունեցող արժեքային համակարգի, հասարակության կողմնորոշվածության, մարդու կողմից իր դերի գիտակցված ընտրության համար: Բարեփոխումների նպատակը կրթության համակարգի կայուն զարգացման մեխանիզմների ստեղծումն ու մշակումն է, հասարակության պահանջներին դրա համապատասխանության և արդյունավետության ապահովումը»,– գրում են Ն. Հարությունյանը և Ա. Գրիգորյանը [1; 5-6]:

Ե՛վ Հայաստանը, և՛ Ղազախստանն ակտիվորեն մասնակցում են միջազգային կրթական գործընթացներին՝ կատարելով համապատասխան քայլեր՝ բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածք ինտեգրվելու համար:

Հայաստանի Հանրապետությունը, 2005 թվականին ստորագրելով Բերգենի կոմյունիկեն, միացավ բոլոնյան գործընթացին և պարտականություններ ստանձնեց՝ բարեփոխելու բարձրագույն կրթության համակարգը տարբեր ուղղություններով, որոնցից մենք կանգ կառնենք բուհի կառավարման հարցի վրա:

2004-2005 ուսումնական տարվանից Հայաստանի բոլոր բուհերն անցան բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի՝ բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա (դոկտորանտուրա)՝ վերափոխելով ուսումնական պլանները, ծրագրերը, ձեռնարկները՝ հաշվի առնելով բարձրագույն կրթության եվրոպական չափորոշիչները:

2005 թվականին փոխվեց նաև բուհերի կառավարման համակարգը: Հիմք ընդունելով 2004 թվականին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ 2005 թվականի մայիսին Հայաստանի բոլոր բուհերում ձևավորվեցին բուհերի կառավարման բարձրագույն մարմիններ՝ խորհուրդներ, որոնց կազմում ընդգրկվեցին ինչպես դասախոսներ և ուսանողներ (25-ական %), այնպես էլ ՀՀ կառավարության և ՀՀ ԿԳ նախարարության ներկայացուցիչներ (նույնպես 25-ական %):

Համալսարանական խորհուրդը համագործակցային և կոլեգիալ մարմին է: Ոչ միայն բուհի դասախոսները, այլև ուսանողները, պետությունը և տնտեսության ու հասարակության ներկայացուցիչներն իրենց մասնակցությունն են բե-

րում բուհի կառավարման հարցերում: Խորհրդում հարցերը քննարկվում են, և որոշումներն ընդունվում միասնաբար՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

Համալսարանական խորհուրդը մրցութային կարգով ընտրում է բուհի ռեկտորին, որը՝ որպես գործադիր մարմին, տարին մեկ հաշվետվություն է տալիս խորհրդին: Ըստ բուհի կառավարման նոր համակարգի՝ համալսարաններին տրվեցին որոշ ինքնավարություն և ակադեմիական ազատություններ, սակայն պետության ձեռքին մնացին վերահսկողական մեծ լիազորություններ, որոնցով պետությունը ներգործում է բուհերի ազատ գործունեության վրա (ֆինանսավորում, լիցենզավորում, հավատարմագրում, վերահսկողություն, կառավարման գործընթացին մասնակցություն):

Բուհի կառավարման նոր համակարգը փոխեց ներհամալսարանական կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդներն ու ոճերը: Այսինքն՝ տեղի ունեցավ անցում ուղղահայաց՝ կենտրոնաձիգ-վարչահրամայական կառավարումից դեպի հորիզոնական՝ կենտրոնախույս-ժողովրդավարական կառավարում:

Համաշխարհային բանկի փորձագետ Ֆիլիպ Ալտբախը գրում է. «Բուհերի կառավարման ապակենտրոնացումն ու ժողովրդավարացումը ենթադրում են՝ ռեկտորների ընտրություն բուհի կառավարման կոլեգիալ մարմնում, ֆինանսական, կադրային ինքնավարություն և ակադեմիական ազատություններ» [7; 336]:

2014 թվականից փոխվեց Հայաստանի բոլոր բուհերի կազմակերպական-իրավական ձևը, և բուհերը դարձան հիմնադրամներ: Համալսարաններում ձևավորվեցին հոգաբարձուների խորհուրդներ, որոնք բուհերի կառավարման բարձրագույն մարմիններ են: Նրանց կառուցվածքը նման է համալսարանական խորհուրդների կառուցվածքին: Համալսարանների հոգաբարձուների խորհուրդների կառուցվածքը պահպանված է առ այսօր՝ մինչև «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը, որտեղ կան փոփոխություններ բուհերի հոգաբարձուների խորհուրդների կառուցվածքի և լիազորությունների վերաբերյալ:

Համալսարանների հիմնադրամներ դառնալը մեծացրեց ուսանողների ինքնավարությունը և ակտիվ մասնակցությունը բուհի կառավարման համակարգում: Նրանք ներառված են ոչ միայն հոգաբարձուների խորհրդում (25 %), այլև բուհի գիտական խորհրդում (25 %) և ֆակուլտետների ու կենտրոնների գիտական խորհուրդներում (25 %):

Եթե համեմատական տանենք Հայաստանի մինչ 2005 թվականի բուհերի կառավարման հին համակարգի և նորի միջև, ապա ակնառու է տարբերությունը թե՛ բուհի ինքնավարության, ակադեմիական ազատությունների, թե՛ լիազորությունների առումով: Եվ հարց է առաջանում՝ Հայաստանի բուհերի կառավարման այս նոր համակարգը բարձրագույն կրթության կառավարման աշխարհում գործող որ մոդելին է ավելի հարում կամ ամբողջովին համապատասխանում: Պատասխանը միանշանակ է: Հայաստանի որդեգրած բարձրագույն կրթության կառավարման նոր համակարգը տեղավորվում է բարձրագույն կրթության կառավարման Մայրցամաքային եվրոպական մոդելի շրջանակներում՝ որոշ չափով աղերսվելով Հումբոլդտյան մոդելին:

Իսկ ինչպիսի՞ն է Ղազախստանի բարձրագույն կրթության համակարգը:

Ղազախստանի կրթության համակարգն անցած դարի 90-ական թվականներին զարգանում էր հին մեթոդաբանական բազայի պայմաններում, արդյունքում անկում էր ապրում կրթության որակը: Սակայն երկրի տնտեսական զարգացմանը զուգահեռ կառավարությունն ուշադրություն դարձրեց կրթության որակին: Եվ կրթության որակը բարելավվելու և այն երկրի պահանջներին ու միջազգային չափորոշիչներին համապատասխանեցելու համար սկսվեցին բարեփոխումները կրթության համակարգում:

ԱՊՀ բոլոր երկրներից Ղազախստանն իրականացրեց առավել ռադիկալ ռեֆորմներ բարձրագույն կրթության համակարգում: 2007 թվականին այն ուներ հետևյալ կառուցվածքը՝ բակալավիատ (4 տարի), մագիստրատուրա (2 տարի), դոկտորանտուրա (3 տարի):

2010 թվականի մարտի 11-ին (Բուդապեշտ, Հունգարիա) Ղազախստանը պաշտոնապես միացավ Բոլոնիայի հռչակագրին՝ դառնալով բարձրագույն կրթության եվրոպական տարածքի 47-րդ լիիրավ անդամը:

Յու. Պակը և Ա. Գազալիևը գրում են. «Որչա՞փ է Ղազախստանի բարձրագույն կրթության համակարգը համապատասխանում Բոլոնիայի հռչակագրի սկզբունքներին: Այսօր կարելի ամբողջական հիմնավորմամբ հաստատել, որ Ղազախստանում ձևավորվել է կրթության ազգային մոդելը՝ բավարար չափով համապատասխանեցնելով կրթության արևմտաեվրոպական և ամերիկյան համակարգերին: Դեռ ավելին, բոլոնյան գործընթացի պահանջների իրականացման որոշ հարցերում Ղազախստանն առաջ է անցել Արևմտյան Եվրոպայի շատ երկրներից [5; 28]:

Որքան էլ Ղազախստանը ջանում է իրականացնել Բոլոնիայի հռչակագրի բոլոր սկզբունքները, սակայն որոշ հարցերին տալիս է տարբեր լուծումներ՝

հաշվի առնելով իր երկրի և հասարակության պահանջները։ Այսպես, ըստ Է. Ա. Սերիկովի՝ Ղազախստանի բարձրագույն կրթության համակարգի տարբերությունը արևմտաեվրոպականից այն է, որ բարձրագույն կրթության երկրորդ աստիճանը՝ մագիստրատուրան, բաժանված է երկու ուղղությունների՝ գիտական և ըստ պրոֆիլի։ Մագիստրատուրայում պրոֆիլային ուղղության ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է Ղազախստանի կադրերի պահանջարկներով։ Տեխնիկական մասնագիտությունների գծով պրոֆիլային մագիստրոսների պատրաստումն առավել համապատասխանում է տեխնոլոգիական արտադրության պահանջարկներին, քան գիտության մագիստրոսների պատրաստումը։ Միևնույն ժամանակ դոկտորանտուրայի երկու ուղղության բաժանումը՝ PhD և ըստ պրոֆիլների, ըստ Սերիկովի, դիտվում է սխալ, քանի որ նրանց կրթական ծրագրերը պարտադիր բաղադրիչում ամբողջովին համընկնում են, և տարբերությունը միայն գիտական հետազոտությունների ընտրության և ուղղության բաղադրիչում է [6;118]։

Իսկ ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել Ղազախստանի բուհերի կառավարման համակարգը նրանց ինքնավարության, ակադեմիական ազատությունների և լիազորությունների ավելացման համատեքստում։

Ղազախստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարումը բարելավելու և այն զարգացած երկրների միջազգային պրակտիկային համապատասխանեցնելու նպատակով որոշվեց բոլոր բուհերում ձևավորել կառավարման խորհուրդներ, որոնց կազմում ընդգրկվեցին դրսից շահագրգիռ անձինք։ Խորհուրդների կազմը հաստատում է Նախարարությունը։ Կառավարման խորհուրդներն ընտրում են բուհերի ռեկտորներին, գնահատում նրանց գործունեությունը, հաստատում բուհերի ռազմավարական ծրագիրը և բյուջեն, աջակցում բուհերին կառավարության և հասարակության հետ համագործակցություն իրականացնելու ճանապարհով։

«Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների Խորհուրդները զբաղվում են ոչ միայն կենտրոնացված քաղաքականության վերահսկողության իրականացմամբ, նրանք բուհերում ստեղծում են բազմազանության և նորարարությունների տարածք՝ ինստիտուցիոնալ առաքելությունների լայն շրջանակներում» [4; 323]։

Ըստ Է. Սերիկովի մեկնաբանման՝ «բուհի ինքնավարությունը նախ և առաջ բուհի ինքնակառավարումն է և ինքնուրույնությունը կադրերի ընտրության, ուսումնական, գիտական, ֆինանսատնտեսական և այլ գործունեություն իրականացնելիս՝ բուհի օրենսդրությանն ու կանոնադրությանը համապատասխա-

նացնելով: Մյուս կողմից ինքնավարությունը բուհի պատասխանատվությունն է պետության և հասարակության առջև. ապրել հասարակության մեջ և լինել նրանից ազատ հնարավոր չէ» [6; 123]:

Եվ այստեղ պետք է տանք միևնույն հարցը՝ Ղազախստանի բուհերի կառավարման նոր համակարգը բարձրագույն կրթության կառավարման աշխարհում գործող որ մոդելին է ավելի հարում կամ ամբողջովին համապատասխանում: Պատասխանը միանշանակ նույնն է. Ղազախստանի որդեգրած բարձրագույն կրթության կառավարման նոր համակարգը համապատասխանում է բարձրագույն կրթության կառավարման Մայրցամաքային եվրոպական մոդելին՝ որոշ չափով աղերսվելով Հումբոլդտյան մոդելին:

Մեկնաբանելով Հայաստանի և Ղազախստանի բարձրագույն կրթության կառավարման համակարգերը՝ համեմատական վերլուծությամբ ներկայացնենք այդ համակարգերի նմանություններն ու տարբերությունները:

Նմանությունները

- Թե՛ Հայաստանը, և թե՛ Ղազախստանը նախկին Խորհրդային Միության հանրապետություններ են եղել, որոնք նույն սկզբունքներով ու պայմաններով ինտեգրված էին երկրի բոլոր ոլորտներում որպես մի ամբողջական համակարգ:
- Որպես բարձրագույն կրթության զարգացման ճանապարհ՝ երկու երկրներն էլ ընտրել են բարեփոխումները, որոնց անցկացման գործընթացում, իրականացնելով Բոլոնիայի հռչակագրի սկզբունքները, պահպանել են ազգային հենքը:
- Երկու երկրների բուհերում էլ գործում են բուհերի կառավարման բարձրագույն մարմիններ՝ հոգաբարձուների խորհուրդներ, որոնք իրենց ներդրումն են բերում բուհերի զարգացման գործին:
- Չնայած և՛ Հայաստանը, և՛ Ղազախստանն ընտրեցին բուհերի զարգացման ժողովրդավարական ուղին, սակայն երկու երկրներում էլ չափազանց մեծ է պետության մասնակցությունն ու վերահսկողությունը բուհերի գիտակրթական գործունեությանը՝ դրանով թուլացնելով բուհերի ինքնավարությունն ու ակադեմիական ազատությունները:

Տարբերությունները

- Երկու պետություններն էլ, մտահոգվելով իրենց երկրների բարձրագույն կրթության զարգացմամբ, միացել են Բոլոնիայի հռչակագրին. Հայաս-

տանը՝ 2005 թվականին, իսկ Ղազախստանը՝ 2010 թվականին՝ ինտեգրվելով բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածք:

- Ի տարբերություն Հայաստանի՝ Ղազախստանում բարձրագույն կրթության երկրորդ աստիճանը՝ մագիստրատուրան, բաժանված է երկու ուղղությունների՝ գիտական և ըստ պրոֆիլների:
- Ի տարբերություն Հայաստանի, որտեղ բարձրագույն կրթության երրորդ աստիճանը ասպիրանտուրան է, Ղազախստանում՝ դոկտորանտուրան, որն էլ բաժանված է երկու ուղղության՝ PhD և ըստ պրոֆիլների:
- Տարբեր են երկու երկրների բուհերում գնահատման համակարգերը:
- Տարբեր են երկու երկրների բուհերում գործող հոգաբարձուների խորհուրդների կազմը. Հայաստանում խորհուրդների աշխատանքներին մասնակցում են և՛ դասախոսները, և՛ ուսանողները, և՛ կառավարության ու լիազոր մարմնի ներկայացուցիչները: Իսկ Ղազախստանում խորհուրդները ձևավորվում են դրսի նշանավոր մարդկանցից, որոնց առաջարկում է կառավարությունը:

Ամփոփելով վերլուծությունը՝ ուզում ենք փաստել, որ այսօր՝ 21-րդ դարում, բարձրագույն կրթությունը վերածվել է տնտեսության զարգացման հզոր գործոնի, որն ապահովում է հասարակության զարգացման վճռորոշ ռեսուրսի՝ մարդկային կապիտալի վերարտադրությունը:

Եզրակացություն: Ուսումնասիրության արդյունքները հանգեցրին այն եզրակացության, որ տարբեր երկրների կրթության համակարգերի կառավարման վերաբերյալ ցանկացած ուսումնասիրություն իր ներդրումն է բերում Համեմատական մանկավարժության զարգացմանը՝ բացահայտելով տարբեր երկրների առաջավոր փորձը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Ն., Գրիգորյան Ա., Կրթության զարգացման և որակավորման խնդիրները, «Մանկավարժական միտք», Երևան, 2013, 1-2:

2. Սարգսյան Յու., Բուդաղյան Ա., Բոլոնիայի գործընթացը Հայաստանում. Ուղեցույց, Երևան, «Անտարես», 2008, 74 էջ:

3. Болонский процесс: концептуально-методологические проблемы качества высшего образования (книга-приложение 3) /Научное издание под ред. В. И. Байденко, Астана, НКАОКО, 2010.

4. Обзор национальной политики в области образования: высшее образование в Казахстане 2017, редакторы: Алима Ибрашева, Аида Ахметжанова, Астана, 2017.

5. Пак Ю. Н., Газалиев А. М., Болонский процесс и казахстанские реалии. Монография,Караганда; Изд-во КарГТУ, 2012, с. 28.

6. Сериков Э. А., Система высшего технического образования в Казахстане: движение по спирали, монография, Алматы, 2015, 276 с.

7. Philip G., Altbach and Jamil Salmi (Ed.) The Road to Academic Excellence. The Making of World-Class Research Universities. Washington: The World Bank, 2011, 339 p.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СИСТЕМ УПРАВЛЕНИЯ ВЫСШИМ ОБРАЗОВАНИЕМ АРМЕНИИ И КАЗАХСТАНА

Арутюнян Назик

ЕГУ, Армения

Аннотация

Сегодня в мире чрезвычайно актуальны исследования, содержащие сравнительный анализ систем управления образованием разных стран. Данные исследования имеют высокую ценность, а также решают две важные задачи: познавательную и обмен опытом. Исследования, представленные в статье, однозначно способствуют развитию сравнительной педагогики. В статье проведён сравнительный анализ систем управления высшим образованием двух стран-членов ЕАЭС – Армении и Казахстана. Представлены сходства и различия, достижения, а также проблемы этих систем. В частности, в статье представлены реформы, осуществлённые как в системе управления высшим образованием Армении, так и Казахстана в контексте Болонского процесса. В статье проанализирована трёхступенчатая система высшего образования, система управления, а также система оценивания в двух странах. Согласно результатам исследования, в системе высшего образования Армении и Казахстана необходимы серьёзные реформы как в вопросах улучшения качества образования, так и в вопросах демократизации управления.

Ключевые слова: высшее образование, трёхступенчатая система образования, система управления, образовательные реформы, Болонский процесс.

Список использованной литературы

1. Арутюнян Н., Григорян А., Проблемы развития образования и квалификации, Педагогическая мысль, Ереван, 2013, №1-2.

2. Саргсян Ю., Будагян А., Болонский процесс в Армении, Ереван, 2008.

3. Болонский процесс: концептуально-методологические проблемы качества высшего образования (книга-приложение 3) /Научное издание под ред. В. И. Байденко, Астана, НКАОКО, 2010.

4. Обзор национальной политики в области образования: высшее образование в Казахстане 2017, редакторы: Алима Ибрашева, Аида Ахметжанова, Астана, 2017.

5. Пак Ю. Н., Газалиев А. М., Болонский процесс и казахстанские реалии. Монография, Караганда; Изд-во КарГТУ, 2012, с. 28.

6. Сериков Э. А., Система высшего технического образования в Казахстане: движение по спирали, Монография, Алматы, 2015, 276 с.

7. Филипп Г., Алтбах и Джамил Салми, Путь к академическому превосходству, Вашингтон, 2011, 339 с.

COMPARATIVE ANALYSIS OF HIGHER EDUCATION MANAGEMENT IN ARMENIA AND KAZAKHSTAN

Harutyunyan Nazik
Yerevan State University, Armenia

Summary

The comparative analysis of higher education management in different countries has become extremely relevant and highly valuable in the world today. These studies address two important issues: i.e. the exchange of cognitive and advanced experience and definite contribution to the development of Comparative Pedagogy. Furthermore, the article compares the higher education management of the two EAEU member states: i.e. Armenia and Kazakhstan as well as presents similarities and differences, achievements and problems of the management system. In particular, reforms that are implemented both in Armenia and Kazakhstan in the context of the Bologna Process are presented in the article. The present article conducts a comparative analysis of Three Degree Education System, Management System and Assessment System.

Keywords: Higher Education, Management System, Educational Reforms, Three Degree Education System, Assessment System,.

References:

1. Harutyunyan N., Grigoryan A., Problems of Education Development and Qualification, Pedagogical Thought, Yerevan, 2013, №1-2.
2. Sargsyan Y., Budaghyan A., The Bologna Process in Armenia, Yerevan, 2008.
3. The Bologna Process: Conceptional-methodological Problems of Higher Education quality. Editor V. I. Baydenko, Astana, 2010.
4. Review of National Politics in the Field of Education: Higher Education in Kazakhstan 2017, Editors: Alima Ibrasheva, Aida Akhmetjanova, Astana, 2017.
5. Pak U. N., Gazaliev A.M., The Bologna Process and Kazakhstanian Realities, Monograph,
6. Serikov E. A., The System of Higher Technical Education in Kazakhstan. Monograph, Almaty, 2015.
7. Philip G., Altbach and Jamil Salmi (Ed.) The Road to Academic Excellence. The Making of World-Class Research Universities. Washington: The World Bank, 2011.

Материал был представлен и отправлен на рецензию: 20.08.2020
Принято к публикации: 27.08.2020
Рецензент: канд. пед. наук, ассистент Мери Аветисян

The material was submitted and sent to review: 20.08.2020
Was accepted for publication: 27.08.2020
Reviewer: PhD, Assistant Mary Avetisyan